1 օգոստոսի 2019 թվականի N 970 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 214-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՀԵԼԼՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 214-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) հավելվածը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-ից 9-րդ կետերով՝

«

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8. | 6004100000 | Տրիկոտաժե քաթաններ՝ մեքենայագործ, 30 սմ-ից ավելի լայնությամբ, էլաստոմերային կամ ռետինե թելերի 5 զանգ. % կամ դրանից ավելի պարունակությամբ | Տրիկոտաժե գործվածք՝ էլաստոմերային թելերի 5% կամ ավելի պարունակությամբ | կգ | 26 000 | Թուրքիա | 42 700 000 |
| 9. | 5806200000 | Տրիկոտաժե գործվածք՝ էլաստոմերային կամ ռետինե թելերի 5 զանգ. % կամ դրանից ավելի պարունակությամբ | Տրիկոտաժե գործվածք՝ էլաստոմերային թելերի 100% պարունակությամբ | կգ | 4 000 | Թուրքիա | 6 762 000 |

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «106 343 600» թիվը փոխարինել «155 805 600» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 2
Երևան